



Disability
Rights
California

Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

Քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ հայցեր. Հանրային իրավական միավորումների դեմ հայց ներկայացնելը՝ «Կալիֆորնիայի քաղաքացիական իրավախախտումների հայցեր» օրենքի ներքո

Փետրվար, 2019թ., հրապ. #5229.10

Եթե կարծում եք, որ վնասվել եք և ցանկանում եք անձնական վնասվածքի վերաբերյալ դատական հայց ներկայացնել, հնարավոր է, որ կարիք լինի նախ քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ հայց ներկայացնել:

Քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ հայցը ներկայացվում է այն դեպքում, երբ Ձեզ վնասող անձը պետական ծառայող է: Դուք սովորաբար պետք է քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ հայց ներկայացնեք Ձեր վնասվելու օրվանից սկսած **վեց ամսվա** ընթացքում: Եթե քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ հայցը ժամանակին չներկայացնեք, հնարավոր է, որ չկարողանաք դատական հայց ներկայացնել:

Եթե ցանկանաք անձնական վնասվածքի վերաբերյալ դատական հայց ներկայացնել, ապա պետք է անհապաղ փաստաբանի դիմեք: Disability Rights California-ն օրենքի այս ոլորտում չի գործում: Մենք չենք կարող Ձեզ խորհուրդ տալ քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ հայց ներկայացնելու հարցում: Մենք չենք կարող օգնել Ձեզ քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ հայց ներկայացնել:

Նույնիսկ եթե արդեն վեց ամսից ավելի ժամանակ է անցել, Դուք պետք է դիմեք անձնական վնասվածքների հարցերով փաստաբանի: Փաստաբանը կարող է օգնել Ձեզ գտնել քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ ճիշտ հայցադիմումը, Ձեզ հետ զրուցել այն մասին, թե երբ է սկսվում ժամանակի սանդղակը, ինչպես նաև օգնել Ձեզ՝ հասկանալու վերջնաժամկետը: Փաստաբանը կարող է Ձեզ ասել, թե արդյոք կարող եք ուշացած հայց ներկայացնել: Անձնական վնասվածքի փաստաբանը կարող է Ձեզ խորհուրդ տալ հաջորդ քայլերի մասին, որոնք կարող եք կատարել

քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ հայցը ներկայացնելուց հետո:

Disability Rights California-ն կարող է Ձեզ տրամադրել անձնական վնասվածքի հարցերով փաստաբանների ցանկ կամ Դուք կարող եք զանգահարել Կալիֆորնիա Նահանգի փաստաբանների ուղղորդման ծառայություն (California State Bar Lawyer Referral service)՝ ուղեգիր խնդրելով՝

1-866-442-2529 հեռախոսահամարով:

www.calbar.org/lrs

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցումը\]](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա):

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝

[http://www.disabilityrightsca.org/Documents/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/Documents/ListofGrantsAndContracts.html).